

Մ Ե Ր Չ Ո Ւ Մ Ը

○○○○○○○○○○

1.— ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՆԱՄԿ

Մարձուժք (*massage*) իր նախնական ձևով, իբր բուժիչ միջոց-
յայտնի է հնագոյն ժամանակներէն:

Հայոց լեզուի մէջ երեք բառ ինծի ծանօթ է, որոնք նոյն գոր-
ծողութեան տարբեր կերպերը ցոյց կուտան՝ մաժել, մարձել եւ
մարզել:

Այս երեք բառերն ալ միեւնոյն արմատի եզանակաւորուժք կ'ե-
րուին բացայայտքէն. նոյն արմատն է նաև յունարէնի, հնդկերէնի,
ֆրանսերէնի եւ այլ լեզուներու. մէջ, արզ պէտք է բնդունիլ որ ան
հնդերոպական արմատ մըն է, որ շփել, շաղուել կամ ճնշել ի-
մասան ունի: Մաժել՝ արեւելահայ բառ է եւ եւ կը համապատաս-
խանէ ֆրանսերէն *effleurage*ին (հպանցում). մարձել՝ *massage*ն է,
իսկ մարզել, մարզանք, ունին արզէն ճշգուած խմատ, երկար ժա-
մանակէ ի վեր: Մարձուժք մարդու չափ հին է: Անոր առաջին կիր-
առուժքը բնազգական է եղած, ինչպէս հիմա ալ բնազգարար կը
չփնէք կամ կը արորենք մեր մարմնի ո եւ է ցուռտ մասը: Բնազգա-
կան այս կիրառուժք ժամանակի բնթացքին կը զարգանայ մինչև
Միջին դար, որմէ յետոյ զազար մը կ'ունենայ անտեսուելով բժշկու-
թեանէն մինչև ժ՛՛՛ղ զարր: Մարձուժք որպէս բուժական ազգակ նոր
թափ մը կ'առնէ ժ՛՛՛ղ զարուն Փորձատական կիրառուժք կը հիմ-
նաւորուի բնախօսութեան, անդամազննութեան եւ ախտարանութեան
տուեայներով:

Զինական ձեռագիրները 3000 տարի առաջ (ն. Ք.) կը խօսին
մարձուժի մասին: Հնդկական սուրբ գիրքերու՝ վիտաներու մէջ
բնդհանուր մարձումն ու մարզանքը մեծ տեղ մը կը բռնեն: Զինաս-
տանի եւ Հնդկաստանի մէջ մարձուժք կը գործադրուէր քուրճերու
ձեռքով: Այդ հետաւոր ժամանակներուն մէջ, արզէն դոյութիւն ու-
նէին դպրոցներ, ուր մարձուժք, մարզանքը, մեքենարութիւնը
(*mécanothérapie*) ուսուցման մաս կը կազմէին:

Հին-յոյները ունէին մասնազէտ-մարձողներ, որոնք կը կոչուէին
ալիպա (*aliple*): Համբոսի գիւցազներգութիւններէն կ'երևի թէ
կանայք կը շփէին ու կը հունձէին (շաղուել, *pêlir*) հերոսներուն մար-
մինը անուշահոտ իւղերով:

*) Այս յօդուածաշարը պատրաստելու համար օգտուած եմ *prof*
*E. M. Pico*ի դասախօսութիւններէն եւ փորձերէն, ինչպէս նաև
կարգ մը Յիղինակներէ՝ *Malfort, Hugon, Berne* ևն.:

Մարձումի մասին գրուած շատ մը գրքեր կան հինէն մնացած: Շատ հին բժիշկներ մշակած են այս գիտութիւնը: Պերգամա, Եսկուլայի տաճարին մէջ մարձումը կ'ընէին ոչ միայն ձեռքերով, այլ նաև գործիքներով: Դեռ Հիպոկրատէն առաջ, Հերոտիկոս կը կիրառէր մարձումը բեկումներու համար: Հիպոկրատս կ'օգտագործէր զայն յօդացաւի դէմ և կ'ըսէ «Յօդ մը կրնայ ձգուիլ (թուլնալ) կամ ձգտուիլ (պրկուիլ) մարձումով, շփումը կրնայ պրկել կամ թուլցնել, նիհարցնել կամ գիրցնել: Չոր և յաճախակի մարձումը կը պրկէ, կը նիհարցնէ, թոյլ և չափաւոր՝ կը գերցնէ»: Հիպոկրատսն է որ փորձառական այս կիրառումներուն կուտայ գիտական հիմք: Սէլսը (Cels) խորհուրդ կուտայ զայն գործադրել հիւսուածներու մէջի զանազան մնասակար մթերները (dépôt) անհետացնելու և ցաւերը մեղմելու համար:

Մարձումը՝ յոյներէն կ'անցնի Հռոմ, ուր կը կիրառէին զայն որոշ օրէնքներու համաձայն: Հռոմի բոլոր բաղնիքներուն մէջ մարձումի յատկացուած սենեակներ կային: Մարձումը փորձառարար կը կիրակուի դեռ Արեւելքի մէջ:

Ափրիկեցեք մարձումը կ'օգտագործեն իբր համազեղ (panacée): Հարաւային Ամերիկայի մէջ ալ կարմրամորթները շատ ճարպկութեամբ կը մարձեն: Ծառնի մէջ մարձումը յարգարանքի (toilette) մաս կը կազմէ: Հոն կոյրերն են, որ կը մարձեն և հակառակ անոր որ գիտական հիմք չունին, կը կիրառեն շատ մեծ յաջողութեամբ:

Պաշակիրներուն հետ է որ մարձումը կ'անցնի Եւրոպայի բոլոր կողմերը: Մարձումը տգէտներու և խաբեբաններու կողմէ չահագործուելով՝ կը վարկաբեկուի, ուստի և երկար ժամանակ, ո և է բժիշկ չի համարձակիր կիրառել կամ յանձնարարել:

Վերաբուժութեան հիմնադիրը ԺՁ դարուն կը նկարագրէ մարձումն ու իր հետեւանքները: ԺԼ դարուն, մարձաբուժութիւնը (massothérapie) կ'առնէ կարգ մը բժիշկներու ուշադրութիւնը: Գերմանացի Հօֆման՝ մեքենաբուժութեան (mécanothérapie) մասին գրած գրքերէն մէկուն ճակտին հետեւեալ բնորոշ նշանաբանը գրած է. «Շարժումը մարմնի համար ամէնէն ազդու բուժական միջոցն է»:

Յիշուած հեղինակներն ու անոնց գործերը սակայն չի կրցին ազդել հանրութեան վրայ. որովհետեւ, ինչպէս ըսուեցաւ, մարձումը վարկաբեկուած էր: Վերականգնելու համար անոր բուն արժէքը պէտք էր բժշկական հեղինակութիւն: Այդ պատիւը կը պատկանի շուէտական դպրոցին, ուրկէ կ'անցնի Գերմանիա, Հոլանտա. շարք մը նշանաւոր բժիշկներ կը զբաղին այս գիտութիւնով և կը յայտարարեն մարձումի դերն ու օգուտները բազմաթիւ հիւանդութիւն-

ներու բուժման մէջ: 1861ին Thure Brandt մարնուծն ու բուժական մարզանքը ժողովը կիսախտարանուծեան (gynecologie) մէջ:

Յրեւարուժութիւնը (vibrotherapie) ձեռքով լի գործիքով, որ մարնուծի մէկ ձեւն է, մասնաւոր տեղ մը բնած է հին գարեբէն մինչև ժէ գար և մեր օրերը:

Ձրնացիներ, հին-յոյներ, հասնայեցիներ ունէին մասնաւոր անկողիններ՝ թրթարուժութեան համար: Թրթարոյժ անկողինները յետագային կը վերածուին աթոռներու: Շարքս աթոռին հետ կը գործածէ նաև թրթարոյժ սպգուարտ: Թրթարուժութեան գիտական հիմք տուաւ և կատարելագործեց Հէնրիք Քէլկըրէն:

ՇԼԼԸ

Թ Ո Ք Ը Տ Ը Գ

Թոքերու հիւանդութեանց կարգին մասնաւոր տեղ մը կը գրաւէ նաև թոքատապը (սաթլիճան, pneumonie) որ յաճախ կ'երեւի ձմեռ և գարնան սկիզբները:

Այս հիւանդութիւնն ալ, ուրիշ շտաբերու նման, ունի իրեն մասնաշատուկ միքրոպը՝ pneumocoque անունով: Այս միքրոպը առհասարակ առողջ մարդերու շնչառային ձամբաներու վերի մասին վրայ, (կոկորդ, քիթ) և բերնի լորձանքին մէջ կը գտնուի, և տարիներ շարունակ մեզի հետ միասին կ'ապրի տասնց ու և է վնաս հասցնելու:

Բնական իրճակի մէջ շատ մը առողջ մարդիկ այս միքրոպը կրեւոյժ հանգեթ, անոնց հիւանդ չըլլալը երկու կերպով կարելի է բացատրել. կամ այն է որ միքրոպին ժահրային գործունէութիւնը, ախտածին ոյժը քիչ է, և կամ ենթակային պաշտպան ոյժերը տուկուն են: Ասկէ դիւրին է հեռեցնել թէ, այն բոլոր պատճառները յոգնութիւն, անքնութիւն, սնունդի անբաւականութիւն, չարաչար սպառուժներ և մանաւանդ յանկարծական ցրտառութիւն, որոնք կրնան մեր մարմնոյն տուկունութիւնը քիչցնել, զայն բնզունակ կը գարձենն այս հիւանդութեան:

Թոքատապը՝ տարիքի և սեռի հետ ալ առնչութիւն ունի. կիներէն աւելի այր մարդերուն քով կը տեսնուի, մանուկներէն աւելի չափահասներու քով՝ յաճախազէպ է, այնպէս որ տարիքի յառաջացումով բնզունակութիւնը կ'աւելնայ: Մերերուն համար այս հիւանդութիւնը վտանգաւոր է և շատ անգամ մահով կը վերջանայ: Աւրուլամուրներն ալ թոքատապի ենթակայ են և չեն կրնար այնքան դիմագրել: Ժանտատեղի, կրիքի, և այլ տեղային հիւանդու-